771

1. Ինչքան էլ որ տխուր
Ու միայնակ լինեմ՝
Հուսահատված, լքված
Եվ ուժասպառ,
Անդադար ես Քեզ եմ
Կանչում, Տե՛ր, ու խնդրում:
Իմ հույսն ես Դու միակ,
Փառք Քեզ հավիտյան:

Ուզում եմ փառաբանել,
Անունդ, Տե՛ր, մեծարել,
Գոհությամբ անվերջ երգել
Փառք Քեզ միշտ, Իմ Տեր:
Ուրախ եմ ես, Տեր Հիսուս,
Որ ունեմ ես Քեզ պես Տեր, Հիսո՛ւս,
Ուրախ եմ, որ կյանքս ես
Քեզ եմ վստահել:

2. Ամեն վիճակի մեջ
Իմ փրկությունը մեծ,
Իմ հույսը, Տե՛ր Հիսուս,
Միայն Քեզնից է:
Ինձ ուժ ես միշտ տալիս,
Որ ես կրկին կանգնեմ,
Ուրախությամբ երգեմ,
Քեզ միշտ մեծարեմ:
Փա՛ռք, գոհություն, Հորը,
Որդուն և Սուրբ Հոգուն (2):

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025